

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 09.12.20թ. կայացած թիվ 5.20-21 նիստի

Նիստը անցկացվեց հեռավար: Նիստին ներկա էին գիտական խորհրդի
36 անդամներից 29-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:

Նիստը վարեց պրոֆեսոր Ռ. Ավագյանը:

Լսեցին՝ Ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:

Պրոֆ. Ավագյանը հաշվետվություն ներկայացնելու համար խոսքը փոխանցեց
ֆակուլտետի դեկան պրոֆ. Ռ. Հակոբյանին:

Ռ.Հակոբյանը իր **ելույթում** ներկայացրեց բակալավրիատի երեք նոր
մասնագիտությունները, որոնք գործելու և գործում են ֆակուլտետում՝

- “Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ” մասնագիտությունը գործում է
այս տարվանից, ընդունվել են 11 ուսանող:
- “Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն” և
“Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա” մասնագիտությունները
գործելու են 2021 թ սեպտեմբերից:

Այս տարի ֆակուլտետը կնքել է մի շարք պայմանագրեր, որոնք կնպաստեն
ֆակուլտետի զարգացմանը և ուսանողների աշխատանքի տեղավորմանը՝ ուսման
ավարտին:

Տարվա ընթացքում ֆակուլտետում անցկացվել են մի շարք սեմինարներ տարբեր
թեմաներով: Սեմինարները ձայնագրվել են և հասանելի են ֆակուլտետի YouTube-յան
ալիքում, ինչպես նաև ֆեյսբուքյան էջում:

Ստեղծվել և գործում է ֆակուլտետի ինտերնետային կայքը www.physics-ysu.am, Ֆեյսբուկյան էջը <https://www.facebook.com/YSU.Physics/> և յուրօրօրյան էջը PHYSDEP SEMINAR - <https://www.youtube.com/channel/UCUPIXx9RP6TeZKuTCpQgJhA> :

Ֆակուլտետի դասախոսները և ասպիրանտները կատարել են մի շարք այցելություններ ՀՀ տարբեր դպրոցներ, նպատակ ունենալով ներկայացնել ֆակուլտետի նորությունները: Նաև, տարվա ընթացքում հյուրընկալվել են դպրոցականների խմբեր, մասնավորապես ֆիզմաթ դպրոցի 10-12 դասարանների աշակերտները:

Շարունակում է գործել "Սովորող ուսուցիչ" ծրագիրը:

Կազմակերպվել են նախապատրաստական դասընթացներ դպրոցականների համար:

ԵՊՀ 100-ամյակի և Ֆիզիկայի ֆակուլտետի 60-ամյակի տոնակատարությունների շրջանակներում անցկացվել է մինի-սիմպոզիում, որին մասնակցել են ՀՀ և արտերկրների նշանավոր գիտնականներ:

Այս տարի ֆիզիկայի ֆակուլտետ են ընդունվել 48 ուսանող, որոնցից 31-ը "Ֆիզիկա", 6-ը՝ "Միջուկային ռեակտորների ֆիզիկա" և 11-ը՝ "Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ" մասնագիտություններով:

Իրականացվել են ուսանողների այցելություններ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ, CANDLE, Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիա (ԵրՖԻ), LT-Pirkal, Աշտարակի ինստիտուտներ, ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ:

Ֆակուլտետի ուսանողները ստացել են կրթաթոշակներ և մրցանակներ՝

- Անվանական կրթաթոշակներ - ԵՊՀ մրցանակ – 1, Գուրգեն Սահակյանի անվան մրցանակ – 1, Ալիխանյան եղբայրների անվան մրցանակ – 1, Վիկտոր Համբարձումյանի անվան մրցանակ - 2,
- Լավագույն մագիստրոսական թեզ – 2 մրցանակ,
- Լավագույն բակալավր - 7 մրցանակ:

Տարվա ընթացքում հրատարակվել են 1 մենագրություն և 2 ուսումնական ձեռնարկ:

Ֆակուլտետում պաշտպանվել են մեկ դոկտորական և 5 թեկնածուական ատենախոսություններ: Տպագրել է 89 հոդված և 48 թեզիս:

Ֆակուլտետում իրականացվում են 4 միջազգային և 8 տեղական դրամաշնորհային ծրագրեր:

Դեկանի ելույթից հետո հաշվետվությամբ ներկայացան ֆակուլտետի ՈւԽ նախագահ Լիլյա Բերբերյանը, ՈւԳԸ նախագահ Մհեր Խաչատրյանը, ինչպես նաև SPIE փոխնախագահ Աննա Գրիգորյանը և Young Minds նախագահ Ելենա Հակոբյանը:

Այնուհետ Ռ. Ավագյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ հարցերի և ելույթների համար:

Ելույթ ունեցավ Մհեր Խաչատրյանը: Նա հարց ուղղեց դեկանին ֆակուլտետում կնքված պայմանագրերի վերաբերյալ և այդ պայմանագրերում ուսանողների ներառվածության վերաբերյալ:

Դեկանը պատասխանեց, որ պայմանագիրներից առաջին հերթին օգտվելու են ուսանողները:

Ելույթ ունեցավ Ռ. Ալավերդյանը: Նա առաջարկեց ֆակուլտետի սեմինարները և դպրոցականների հետ հանդիպումները անցկացնել հեռավար, մշակել հարթակներ դրա իրականացման համար: Նա նաև խոսեց Ֆիզիկայի ֆակուլտետի գիտական ինստիտուտի կողմից առաջարկվող արդի և հանրապետության այսօրվա պահանջներին համապատասխանող գաղափարների առկայության մասին, և դրանց իրականացման համար անհրաժեշտ ներդրումների պակասի մասին, առաջարկելով, հարցը բարձրացնել համապատասխան մարմիններում:

Ելույթ ունեցավ Ա. Վարդանյանը: Նա առաջարկեց դասընթացի նոր ֆորմատ 1-ին կուրսեցիների համար, որտեղ տարբեր բնագավառների հայտնի գիտնականներ ուսանողներին կներկայացնեն այդ ոլորտների արդի խնդիրները: Վարդանյանը խոսեց նաև մասնագիտական տերմինների հայերենով ճիշտ օգտագործման մասին:

Ելույթ ունեցավ Ս. Գրիգորյանը, ով առաջարկեց կազմակերպել առցանց քննարկումներ ֆակուլտետի զարգացմանը և հեղինակության բարձրացմանը նվիրված:

Ելույթ ունեցավ Հ. Բադալյանը: Նա նշեց, որ անհրաժեշտ է քննարկել նաև ֆակուլտետում ստարտապների կազմակերպման հնարավորության հարցը: Բադալյանը նաև առաջարկեց ֆակուլտետում ստեղծել խումբ, որը կգրադվի գրանտների վերաբերյալ տեղեկությունների տրամադրմամբ:

Ելույթ ունեցավ Ռ. Ավագյանը: Ամփոփելով զեկույցները, նա նշեց, որ տարվա ընթացքում ֆակուլտետում կատարվել են տպավորիչ և արդյունավետ աշխատանքներ:

Դեկանի զեկույցին հավանություն տալու հարցը դրվեց քվեարկության: Ներկաները միաձայն կողմ քվեարկեցին:

Որոշեցին. Հավանություն տալ ֆիզիկայի ֆակուլտետի տարեկան զեկույցին:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝



Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝



Գ.Հ. Հովհաննիսյան